— Հետո՞՝ ի՞նչ կարող ե տանել, վոր գանդատիւ ե, եղ Հո անիրավություն ե: Պարտ չեմ, բայց նա անպատճառ ուզում ե մի բան պոկել. բա՛ աշխարհիս յերեսին դատաստան չկա<sup>o</sup>, արդարություն չկա<sup>o</sup>... մի փոքր տարակուսանքից հետո հանդիստ սրտով տասց նա քահանային ե. հետ դարձակ տուն:

Դրանից հետո Դաթուան այդ մասին խսկի չեր ել մտածում եւ նշանակված որը հանդիստ սրտով զնաց զավառական դատարան, վորտեղ այժմ նա տրիչների հետ սպասում եր, թե յե՛րբ պիտի դուրս գա հաշտարար դատավորը, իր դործը քննելու, վորպեսդի արդարացած՝ տուն վերաբառնաւ. ահա բացվում ե սեղանի դիմացի դուռը, դուռս ե զալիս հաշտարար դատավորը, վորին տեսներուն պես՝ ամենքը վոտքի յեն կանգնում: Նա նստեց, շղթան ձգեց վորվածանց նայելու ժողովրդին: Նստելուն պես սկսեց քրքրել իր հետ բերած թղթերը. մի քանիսն ել մոտեցրեց նրան քարտուդարը:

— Նստե՛ք, — կանչեց ժողովրդին դուան մոտ կանգնած սպասավորը:

Բոլոր նստեցին: Այդ միջոցին ներս յեկալ մի յերիտառարդ՝ պորտֆելը կոան տակին և ժամացող դեմքով զնաց դատավորի մոտ և սկսեց ինչ վոր փախալ նրա ականջին:

— Ե՞տ ե՞, վոր գովում են, — հետաքրքրությամբ հարցրեց յերկրորդը և ուշադրությամբ նայեց Գիգոյի «աղվոկատին»

— «Սուլիայի» հետ ինչ դոստ և յեղել, տես, վոնց են իրար հետ ծիծաղում... շարունակեց ելի նույն դյուդացին, յերբ նստեցին:

— Իհարկե... դա և «սուլիան» ա՞յ, եսպես են, — սպատասիսեց առաջինը և ցուցամատներն իրար մոտեցրեց:

— Յերանի դրան, — բացականչեց յերկրորդը և լրեց:

Դատավորի տեսքը մի քիչ ահ ազդեց Դաթուային և նրա մըսայլ գեմքը կասկած զարթեցրեց նրա մեջ: «Վայ թե ստի»: Բայց այդ միջոցին լուսամուտի մոտ դրված խաչ ու ամեստարարը նկատելով՝ նորից հուսաղրվեց «վսնց պիտի ստի, յերբ արդար եմ», — մտածեց նա և սկսեց հետեւի դատավորի յուրաքանչյուր շարժմունքին:

Դատավորը վերջացրեց իր զրույցը Գիգոյի «աղվոկատի» հետ և անմիջապես անցալ գործերի քննության:

Դուրս կանչեց մեկին, ապա մյուսին, յերրորդին և այսպես հերթով՝ քննում՝ եր դործերը, և ամեն անդամ դատավճիոր կարդարիս՝ ժողովուրդը վոտքի յեր կանգնում:

Հերթը հասավ Դաթուային:

Դատավորը կարգաց իսակ ձամփաշվելու և Դաթուան Շրոմիշփրու անունները, վորոնք իսկույն ներկայացան:

— Դու, — ասաց դատավորը, — իսակ ձամփաշվելուն, վաթսուն թուման պարտ ես յեղել, ինչո՞ւ չես վճարել...

— Ինչի՞ յեմ պարտ, չարդ տանեմ, իմ որումս դրանից պարտք չեմ վերցրել. մի յերեք թուման պարտ եմ, են ել հորս վերցրած պարտքն ե, ես աշնանը հաշիվս կվերջացնեմ:

— Վոչ թե յերեք թուման, այլ վաթսուն թումանի համար և գանգատովում. ահա մուրհակն ել այստեղ ե. սուտ հո չեն դրել ու վավերացրել:

— Դրա համար ի՞նչ գժվար բան ե ստեր հնարելը...

— Շատ մի խոսիր, չե՞ վոր վկաներ ել ունի.

— Ըերը պարտ չեմ, ի՞նչպես չխոսեմ:

— Լոիր, լավ, — բարկացավ դատավորը և կանչեց վկաներին:

Իսկ իսակն այդ ժամանակ կանգնած եր լուռ և յերբ Դաթուան ժխտում եր իր պարտքը, նա վորպես թե զարմանալով՝ քմծիծաղ եր տալիս:

— Յերդվեցնե՞մ, — հարցրեց դատավորը Դաթուային, յերբ դուրս զնացին մեռելի գույն ստացած Գիգոն, կելանն ու տանուակը:

— Յերդվեցրու, տեսնենք ինչպես կարող են սուտ ասել, — սպատասիսնեց Դաթուան, ապա գարձավ տանուակը:

— Յես պարտք յե՞րբ եմ վերցրել, վոր գու ալելացրել ես. Հա՞...

Այս հանկարծակի հարցը բոլորովին շփոթեցրեց ու քրտնեցրեց նըան, վորից քիչ մեաց վայր ընկներ:

— Ի՞նչ գիտեմ, յերբ ես վերցրել, — վնթինթաց նա ակամա և իսակին նայեց այնպիսի աչքերով, կարծես ուզում եր ասել՝ աստված ոչախոր քանդի, վոր գու ինձ ես կրակն ես զցել,

— Յեթե չդիտեյիր, տո, անաքանդ, բա ո՞ւր ելիր կնիքը իւշփում, ավելի բարձր ձայնով ասաց Դաթուան և աչքերը չուց տանուակը:

— Զեր կանցելարիան հո չե՞ այստեղ, մի բղավիր — զայրացավ դատավորը և դիմեց մնացածներին.

— Գնացեք, նստեցեք, հիմի կզա քահանան:

Բոլորը հետ գարձան և նստեցին իրենց տեղերում. դատավորը սկսեց ուրիշների գործերը քննել: Դաթուան քահանայի անունը լսելով՝ հուսաղրվեց, վորովհետեւվ դատավորի բռնած դիրքը նրան վախեցնում ու կասկածի մեջ եր զցում: Տանուակը ավելի ես վա-

իսցավ ու մտածունքի մեջ ընկալ: Յերբ դատավորը կանչեց նըրան, կարծում եր, թե առանց յերդման կազմավիք, քանի վոր քահանան չեր յերեվում: բայց հուսախափվեց: Նա պիտի յերդվեր:

«Զանդամը դրանց գլուխը, թող Սիրիք քշեն», —յերկար մըտածելուց հետո ասաց տանուտերն ինքն իրեն, բայց այդ միջոցին աչքի առաջ պարզ ներկայացավ իր տունն ու տեղը, ընտանիքը և սպառուունցավ նրա վողջ մարմնով:

«Տեր ասուլած, ես ինչ կրակի մեջ եմ ընկել», —մըմնջաց նա և ձեռքերը մեկնեց գենի առաջ, կարծես թե մեկին ուզում եր գրկել և հրաժեշտ տալ: Փոխանակ յերեխին գրկելու, վորը սպասում եր նըրան, ձեռքերով բռնեց իր առաջ նստողին, վորը հետ նայելով՝ հարցեց. «—ի՞նչ ես ուզում»: Իրեն ուղղած հանկարծակի հարցը սթափեցրեց նըրան, բաց թողեց ձեռքերն ու ասաց. «վոչինչ, ձեռքս գիպավկ»:

«Վոչ, վոչ, չեմ կարող ներել», —վճռական կերպով բայցականչեց նա, յերբ նրա առաջ նստած մարդը նորից մյուս կողմը նայեց և քրտնած հակատը սրբեց:

Այդ միջոցին ներս մտավ քահանան, վորը մյուս վկաների հետ միասին գուրս գնաց յերդվեցնելու:

Յերդումից հետո դատավորը նորից սկսեց Դաթուայի գործը և վկաներից յուրաքանչյուրին հարց ու փորձի յենթարկեց ասանձին-առանձին:

Յերեք վկաներն ել միատեսակ ցուցմունք տվին, վոր Դաթուան երոք իսակին պարտ և վաթսուն թուման:

— Այդպես, չեն մնա ձեր ողախն ենակես, ինչպես վոր եսոր ձիւտ վկայեցիք իմ մասին, —մորմոքված սրտով, համարյա թե լալով արտասանեց Դաթուան ու նրա ծնկները թուլացան:

Յերբ վկաները վերջացրին իրնց ցուցմունքները և ստորագրեցին իրենց ցուցմունքների տակ, դատավորը մի քանի բան խղողելուց հետո՝ սկսեց կարդալ դատավճիռը, վորի հիման վրա Դաթուա Շըոմիշվիլին պիտի վճարեր իսակ ձամփաշվիլուն վաթսուն թուման, իսկ դատական ծախքերի համար ել ութ ուուրի:

— Աստված չունե՞ք, ինչո՞ւ պիտի զուր տեղը վճարեմ, —կանչեց Դաթուան, յերբ լոեց դատավճիռը, և բարկությունից արտասովեց:

— Ի՞նչպէս թե՝ զուր տեղը, —զայրացավ դատավորը, դատավճիռը զնելով մի կողմ:

— Աստված, յերկի՞նք, գետի՞նք, պարտ չեմ... Հայաստացեք, քրիստոնյաներ չե՞ք...

— Ի՞մ վ, դնա, ուղում ես, ներկայացրու ավելի բարձր մարմնին:

Աւրիշ տեղ ո՞ւր պիտի տանեմ, այստեղ վոր արգար դատաստան չեք կարում, ուրիշ տեղ արգար դատավճիռ կտա՞ն:

— Դուքս տարձեք եղ արջին... կանչեց զայրացած դատավորը և վեր թուավ տեղից բոլորովին այլուրված:

5.

Նենեն և իր ութ տարեկան տղան՝ Գաբրոն, վազուց և, ինչ քնած են: Քնած են գյուղում նաև ուրիշները, և իսկապես գյուղում ո՞վ կմնա արթուն, բոլորն ել աշխատանքից հողնած՝ տուն վերադառնալուն սկս պառկում են քնելու մինչև առավոտվա մթնչաղը՝

վոտն անդամ չեն շարժում: Բայց Դաթուայի աչքերի քունը բոլորովին կարել եր: Նա յերկար ժամանակ, սրահում պտովում եր շամփիք պես և վշտից խեղդվում: Նա չեր կարողանում հաշտվել այն բանի հետ, վոր նրա այգին այսոր այնպես անխիղճ կերպով ձեռքիցը իւեցին և տվին իսակին:

Մինչդեռ լուսինը ժպտում եր Դաթուային և կարծես, թե ասում՝ «Դժբախտ, աշխատանքի վորդի, ինչպես տեսնում եմ, բախտը քեզ չի ժպտալու... քանի դար և, ինչ վոր զու սորուկ ես և քո աշխատածն ուրիշն ետանում... յեթե առաջ Լուարսաբները, Ռեվազներն ու Արշիլներն ելին ձեռքիցդ առնում աղբուագ, այժմ իսակներն են քո աղաները, ունեցածիդ տերերը: Խղճուկ մարդ, մինչև յե՞րբ պիտի համբերես»... «Լուսինը կարծես, չկարողանալով դիմանալ Դաթուայի տխուր հայացքին, ծածկեց ամպի հետևը, սրահը մթնեց:

«Տեր ասուված, որհնվի քո դատաստանը, —բայցականչեց Դաթուան լուսի ծածկվելուց հետո ու նստեց իր տեղում: Նայեց իր շուրջը, նայեց նենեյին ու Գաբրոյին, վորոնք հանգիստ քնած ելին ու լաց յեղավ: «Ել, ինչո՞վ պիտի ապրեցնեմ ձեզ... թշնամուն, բարեկամին կամ աստծուն ինչո՞վ պիտի պատասխան տամ»—դողբոջուն ձայնով կանչեց նենեյին ու թեքեց նրա կողմը:

— Դաթո, Դաթո, շարդ տանեմ, եղ վո՞նց իւեցին մեր այ-

զին, վոր ձայն չհանեցիր, —թույլ, բայց սիրով լի ձայնով բացականչեց Նենեն:

Այս ձայնը հանկարծակի թափ անցավ Դաթուայի մարմնով և ամբողջապես ցնցեց նրան:

— Նենե, —կանչեց նա կնոջը, բայց պատասխան չստացավ. Նենեն հանդիսաւ քնած եր:

— Քնած ե, քնած . . . , գլուխիր շարժելով և դառն ժպտալով ասաց նա և յերկար ժամանակ աչքը չեր հեռացնում և շուտ-շուտ Մթունքները շարժում, կարծես թե՝ բան եր խոսում:

— Եես մարդ եմ, —բացականչեց նա յերկար նայելուց հետո և ելի պառկեց. —Մուլքը խլում են, շունչով կտրում, իսկ դու վոչխարի պես գլուխով քաշ ես արել և ձայն չես հանում. վայ քեզ, իմ անուեր գլուխ, —բղավեց նա ու ձեռքով պինդ խիեց գլխին:

«Ուրիշն իմ տեղը արյուն կթափեր, հենց դռան չեմքին կապաներ իրեն և ուրիշն ներս չեր թողնի. իսկ յե՞ս, ինքո տարս և հանձնեցի . . . թո՞ւ . . . բարկացած թքեց և աչքերը փակեց . . .

— Ինձ դռնե թող, ա՞յ մարդ, յեթե դու բան չես ասում . . . նույն ձեվով և արագ կանչեց Նենեն ու ձեռքերը շարժեց:

— Կնոջ լաչակ պիտի լինի դցած դիսիս, վոչ թե աղամարդու պիլարկ բացականչեց նա, Նենեյի խոռքերը լսելուց հետո և վատքի յելալ:

— Ե՞-ե . . . խորը ախ քաշեց Նենեն և կողքը շուռ ովից:

Այդ միջոցին լուսինը դուրս նայեց ամպերից և լուսավորեց Նենեյին: Նրա չոր, դալկացած սիրուն յերեսը փայլեց, ավելի գեղեցկացավ ու գերեց Դաթուային. նա իր կնոջը դեռ այդչափ սիրուն չեր տեսել և այդ գեղեցկությամբ գրավված՝ չոքեց նրա տուաջ:

— Նենե, Նենե, —մրմնչաց նա քնքուչ ձայնով, —Փոշմանում ես, չե՞ , վոր ինձ նման անձար մարդ ուղեցիր, մի՞թէ յես քեզ արժանի չեմ . . . վոչ, Նենե, յես անձար չեմ, մի վոշմանի . . .

«— Հարալե, Հարալե, Հարիահարալե», —լսվեց այդ միջոցին յերդի ձայն:

Դաթուան շուտ վեր թռավ, սթափեց այդ ձայնից և գարձավ մարմնացած ուշաղբություն: Նա կարծեց, թե լսողությունն իրեն խարեց, բայց յերգը չեր լնդհատում:

— Նա յե, նա յե, . . . նա յե քեֆ անում, ուրախ ե, վոր այդ գիս խլեց . . . ասաց նա և սկսեց ձեռքերով ինչ վոր բան փնտրել: «Սուփոռուլի» (սիրոցի) յերգը հետպհետե ավելի պարզ եր լսվում:

— Մեղավորն յես չեմ, ասուված . . . չոքելով և ձեռքերը վեր բրաձրացնելով կանչեց Դաթուան և արտասվալից աչքերով՝ դողդոջուն շրթունքները քնքաբար միացրեց Նենեյի տաք Հրթունքներին, վորոնք Դաթուայի Հրթունքների հպումից մի քիչ դողդոջունքին:

6.

Իսկ ձամիաշվիլու պատշգամբում, մոմերով լուսավորված աեղանի շուրջը նստած եյին հյուրերը: Դատարանական և «սուլցիայի» պրիստավները նստած եյին ճաղերի կողմը, սեղանի վերին և ներքին ծայրին՝ Գիգոն ու Լեվանը. իսկ նաև իր վարդի իլան՝ պրիստավների գիմացի պատի մոտ:

Ամենքն ուրախ տրամադրության մեջ եյին, նամանավանդ իսակը. նա այդ յերեկո հալվում եր կերպնի ոլես: Այսոր կատարվել եր նրա վաղուցվա իղձը, ել ինչո՞ւ չպիսի ուրախ լիներ:

Նա, յերբ բավական լավ կոնծել եր, սկսեց «սուփրուլի» յերգել, վորին ձայնակցեցին Գիգոն ու Լեվանը: Յերկար ժամանակ ե, վոր նա չի յերգել այս յերգը. նրա կարծիքով այս յերգը դյուղացիներին սաղական բան ե և վոչ թե Խավակի նման մարդուն:

— Բըավո, բըավո, բըավեցին պրիստավները և ծափահարեցին, յերբ Խավակը վերջացրեց «Սուփրուլի»-ն:

— Տեսնում ե՞ք, Խավակը վոնց լավ և յերգում, ասին Գիգոն ու Լեվանը և սկսեցին ծիծաղել:

— Եքարա, Եքարա. . . Խավակի կենացը, —կանչեց պոլիցիական պրիստավը և լցրեց գալաթը: Ուրիշներն ել լցրին և սկսվեց գալաթների չիսկոցը:

— Իսա՞կ, —բավական հեռվից լսվեց մի ձայն, վոր կանչում եր Խավակին: Գալաթների չիսկոց դադարեց. նայեցին այն կողմ, վոր կողմից լսվեց ձայնը, բայց մոմերի լույսը խանդարում եր նրան տեսնել:

Իսկ Խավակը միքը գալաթը ձեռին վերկացավ ու կանչեց.

— Ո՞վ ե . . .

— Մի փոքր սպասիր...

— Ո՞վ ես...

Հրացանի թնդյունն ընդհատեց իսակի խոսքը։ Առմերը հանդան։ Լովեց ամանեղենի ջարդվելու ձայնը, սեղանների աղմուկը և ինչ վոր ծանր ու փափուկ բանի վայր ընկնելը։

— Վո՞ւյ, վո՞ւյ, — աղաղակելով, գուրս փախան անից Բարեն և իր աղջիկները։

— Ո՞վ... ի՞նչ... վո՞րտեղ... մոմ... բացականչում ելին ներկա յեղողները և լեղապատառ վաղում այս ու այն կողմ ու չեյին կարողանում վորոշել, թե ես ինչ փորձանք եր վոր յեկալ նրանց դլսին։

Փոքր աղջիկը վաղելով գուրս բերեց վառած մոմը, վորի լույսի տակ ներկա յեղողներն ականատես յեղան հետեւյալ տեսաբանին։

Սեղանների արանքում, ամանեղենի կտորտանքների մեջ իսակը սրտից վերավորված՝ թափալում եր դիմու և ալյան մեջ։

## ԱՅՍ Ե ՄԵՐ ԿՅԱՆՔԸ

(ՊԱՏԿԵՐ)

— Արա, մի-մի «ստաքան» արագ ածա, վոր մի կարգին տաքանանք, — ասին գյուղացիք խանութպանին, փայտի դատարկ այլերին յեղները լծելուց հետո։

— Այս ըոպեյիս։

Խանութպանը ներս գնաց խանութ, նրան հետեւլեցին և գյուղացիք։ Խանութպանը գյուղացիների առաջ շարելով գավաթները՝ լցրեց ողին։

— Համեցեք, ձեր հոգուն մատաղ, ուրիշ բան հո չեք տնուշ անի, մի փոքր հետո հարցրեց խանութպանը։

— Զե, Շաքը ջան, — պատասխանեց մի գյուղացի և վերցրեց լեռը զավաթներից մինը, ապա դարձավ դեղի մյուսներն ու ասաց։

— Կմեցեք, ել միք ուշանա։

Մյուս գյուղացիք ել վերցրին զավաթները և խմեցին խանութպանի կենացը. վերջինս ել փոխադարձարար բոլորին բարիք ցանկացավ։

— Բաս եղան, գնում եք, ելի, — հարցրեց խանութպանը գյուղացիներին, յերբ նրանք դատարկեցին գավաթները. ապա բերանները դրին խանութպանի տված մի-մի պատառ չոր հացն ու սկսեցին խղճուկ կերպով ծամծմել։

— Այո՛, քեզ մատաղ, ուրիշ ժամանակ վոր լիներ ելի կմնացինք, — ակսեց մի գյուղացի... յեղները կպահեյինք տաք գոմում ինքներս ել մի լավ կբնեյինք. բայց ինչ անենք, չի լինի։ Վոմանք նշանածի համար «բուղիկա» յեն տանում, վոմանք ել անամեր համար՝ կերոն, «պոլչապոշկեք», վոմանք ել այլոց համար ինչ վոր... յեթե առաջուար վաղ չհանենք, նրանից հետո ել լազաթ չունի։

— Այս խոսակցության ժամանակ, գյուղացին ծոցից հանեց

ինը տեղով կարկատած մի փալսո, վորի ծալքերից հազիվ հաղ դուրս քաշեց մեջը պահած մի շահանոցը և զրնդացնելով ձգեց խանութպանի առաջ, ասելով —

— Հավատա, յեղբայր, հինգ մանեթից այս միտյն մնաց, ահա ես ել քեզ:

— Հինգ, հինգ մանեթով ծախեցի՞ք փայտը, — հարցրեց խանութպանն ու ավելացրեց — լավ զին և ունեցել:

— Աստված բարին տա, լավ զին ունի հիմա, բայց ել վորտեղ և են անտեր փայտը, — համարյա՛ր թե միաբերոն առացին ամենքը և հետին ել շահանոցներ գցեցին սեղանի վրա:

— Աստված չեն պահի բոլորիդ, — ասաց խանութպանն ու շահանոցներն ածեց արկով մեջ:

— Ապա, հիմի գնանք, թե չե կուշանանք, — հիշեցրեց դյուզացիներից մինը և դուրս գնաց. սրան հետեւկցին և մյուսները, դրսից կանչելով խանութպանին՝ մնաս բարով, Շաքրո, հաջողությունն...

— Աստված բարի ճանապարհ տա բոլորիդ. — ձայն տվեց ներսից խանութպանը:

Դյուզացիք ճանապարհ ընկան գեպի տուն և բարձր ձայնով խոսում էին իրար հետ այն մասին, թե ինչպես առաջիկա բախտավոր որը կուրախացնեն նրանց, վորոնց համար ընծաներ ելին տանում, հետն ել դովաբանում եին իրանց ընծաներն ու արժեքը բարձրացնում:

— Իմ «բուզիկան» այնքան լավ ե, վոր ինքն իրեն ել կածի, — կսեց նըսանցից մեկը:

— Այ մարդ, են հեր որհնած բուզիկա ծախողը, — շարունակեց ելի նույնը — այնպես կլւացրեց, վոր չդիտեմ վոնց ասեմ... յերեք մասնեթ զին պիտի տայի. բայց աստված յերկար կյանք տա, յերկուսով տվեց:

— Ինչ ասել կուզի, ապա են ժամանակ տեսնելիր, թե վո՞նց կթնդացնելի մեր դյուզի աղջկերանց սրտերը, ծիծաղելով ասաց իլիկոն:

— Վոչ միայն բուզիկա ածել, գահիրա (դափ) ածելն ել վոր զիանաս, ելի մեր աղջկերանց սրտերը չես կարող թնդացնել, քեզ տատելով են նայում, ախուեր ջան, դժվար թե հավանեն:

— Են անիժածները, այ մարդ, «քոքոլա» յեն տալիս (հողբայիր), յերբ աչքով եմ անում նրանց, և յերեսները դարձնում են ինձնից:

— Քո աչքով անելուն այնքան են ուշագրություն դարձնում, վորքան քավիթառ չան հաջոցին, — հանաքով առաց մի սայլապան:

— Ճիշտ վոր այլպես և, են անվիտաններն իմ ի՞նչը չեն հավանում, ուրիշներից պակաս տղա յե՞մ. մի հինգ անդամ փորձեցի նշանվել, բայց չեղապ. ուրիշներին ուղեցին, ինձ՝ չե, քիչ ե մնում այսպես ծերացնեն ինձ:

— Գլուխդ գեռ ծեր չմ՞ս համարում, հա՛, — ծիծաղելով ուսաց մի սայլապան, վորին հետեւեցին և ուրիշները:

— Ճիշտ, իլիկոն, եղ բուզիկան ո՞ւմ համար ես առել:

— Ո՞ւմ համար պիտի առնելի, քրոջս համար. են անտեր տեղում, ա՞յ մարդ, քավոր ել չեն տանում, զեռ ևս մի սանտմայր ել չունեմ, — ծիծաղելով ասաց իլիկոն:

— Մի անգամ վոր աչքից ընկար, Իլիկոն ջան, այնպես ել կշարունակվի, սրանի տեղ չեն դնի, սրանից հետո յել դժվար թե հաջողություն ունենաս:

Ահա այսպես կատակելով ու ծիծաղելով բավական հեռացան Մցիսեթ գյուղից: Վերջը քունները տարափ և չինելների ու յափինջների մեջ փաթաթված քնիցին սայլերում:

— Ապա՛, Սիմոն, եղ քո դոմենիները շախով քշի, կարելի յե առավոտյան վաղ տուն կհասնեքն, վոր «մեկվելեներ»\*) մենք ինքներս լինենք, կանչեց իլիկոն առաջին սայլի վրա գտնվող տասնեն-քսան տարեկան սայլապանին:

— Ի՞նչ կարիք կա շախով քշելու, աքլորականչին տանը կլինենք:

— Յերանի թե այդպես լինի, — բացականչեց իլիկոն, վորից հետո յել ձայն չհանեց:

Սայլապանների քունը տարափ, քնել են նաև Աբարդվա\*\*\*) դետից

\*) «Մեկվելե» վրաց մեջ կոչվում ե այն անձը, վոր նոր տարու ուրը, առավոտյան վաղ, առաջին անգամ վորաք ե զնում մի վորին ընտանիքի տուն, վրաց կարծիքով՝ այդ անձից ե կախված այդ ընտանիքի բախտավորությունն ամբողջ տարին:

\*\*) Աբարդվա դետը միտնում ե Քուռ դետի հետ պատմական Մցիսեթ գյուղի մաս:

աջ և ձախ գտնվող սարերն ու դաշտերը : Այդ լուսնյակ դիմերը, վոր հազվագեղ բան չե Արագվայի ձորում, վոչվոք չի խանգարում նրանց քաղցր քունը : Արթում հն միայն սայլերին լծած ու շուրջի ծածկված յեղներն ու գոմեները, վորոնք վորոճարով ու պոչերը թեթև թափահարելով՝ հաղիկ են չարժում վոսները սար ու դաշտի մեջտեղով անցնող, սոլիտակին տվող կեռ ու մեռ խճուղով վրա : Զի քնած նաև Սիմոնը, վորը կուչ և յեկել առաջին սայլի կոփի վրա և դառն կերպով մրմնջում ե, սայլապանի յերգը, վորին ականջ եյին դնում միայն նրա «Լոմա» և «Նիկորա» յեղները :

Ինչե՞ր չեյին պատկերանում Սիմոնի այդ առնական ու պարզ կլիացի մեջ... նրա, վոչ միայն նրա, այլև նրա յեղբագակիցների ամբողջ եյությունը, նրանց ամբողջ անցյալը, ներկա և ալազա կյանքը, նրանց ուրախությունն ու վիշտը, լավն ու վատը ամբողջապես արտհայտվում եյին նրա յերգի մեջ, և նա այս սրտի խորքից բղխող գյուղական կյանքի դառնությունը հավատում եր միայն իր հավատարիմ անսառներին՝ Լոմային ու Նիկորային, վորոնց ձայն եր տալիս, «Թու, ե» ասելով յերդի ամեն մի տունը վերջացնելիս, կարծես թե՝ ուզում եր ասել Նիկորային ու Լոմային—չքնեք, ականջ զրե՛ք, հո՛ տեսնում եք, ձեզանից ամել ականջ զնող ու մեր ցավին կարեկցող վոչ վոք չունենք : Գոմեներն ել, Սիմոնի յուրաքանչյուր կանչից հետո, մի փոքր ձայն եյին հանում և կարծես առում . «մի վախիր, միրտէ լավ պահիր» : Սիմոնը խրախուսված նրանից, վոր իրեն ականջ են դնում, ավելի դառն ու ավելի զգացմունքով մրմնջում եր իր յերդը :

Այսպես իրար հետ սրտի խորհուրդներով զբաղված Սիմոնն ու իր յեղները չիմացան, թե ինչպես հասան Նարեկվավի զարիվայրին, վորտեղից արեւելյան կողմը յերեվում եյին Սագուրամոյի անտառապատ լեռները, իսկ արեւմտյան կողմը լայն ու ընդարձակ Ծիլկանի ու Մուլիրանի դաշտն ու թփուտը : Ուրիշ ժամանակ այդ բոլորը հիմալի տեսարան եր ներկայացնում, իսկ այժմ, թե՛ դաշտերը և թե՛ սարերը մի տեսակ տիսուր պատկեր ունեյին . այժմ նրանք բոլորն ել ծածկված եյին ձյունով և վոչ մեկի վրա կենդանության նշույլ չեր յերեվում : Աչա այդ

օպատկերը ճամբորդի աչքը սաստիկ հողնեցնում ե, թմրեցնում ու քնացնում :

Այս պատկերը կարծես թե, Սիմոնի վրա յալ ազգեց . նա յել զլուխը կախ գցեց ու մրմնջալով աչքերը փակեց : Սայլերը լումայի և Նիկորայի առաջնորդությամբ իշան ու անցան Նարեկավավի զառիվայրը : Անցան և Նարեկվավայի խանութը, վորը գտնվում եր հենց Նարեկվավայի տակ, վորտեղից այդ ժամին նշմարվում եր ճրագի մի աղոտ լույս միայն...

Լոման և Նիկորան կամաց-կամոց առաջ եյին շարժվում և սպասում իրենց տիրոջ իրախուսող ձայնին : Բայց արգեն բավական ժամանակ եր անցել, ինչ նա չեր կահչում ու քնել եր : Քանի վոր յեղներն այլևս չեյին լսում իրենց տիրոջ ձայնը, իրենք ել ձանձրացան ու կանդ առան՝ քնելու համար : Բայց Սիմոնը զդալով այդ՝ զարթնեց և «Թու, ե՛» կանչեց : Գոմեները չենց վոր ձայնը լսեցին, խկույն սթափեցին, առաջ շարժվեցին ու սայլը զանգաղ տարան առաջ, իսկ Սիմոնը նմրից փակեց աչքերն ու քնեց ...

Հենց այդ ժամին հանձարծ յերեաց գեաի սայլերը սլացող մի կառք, վորին յերկու կողմից հետեւում եյին յերկու զենքած չափառ : Կառը հետզհետե մուտենում եր սայլերին և ավելի պարզ լսվում եր ձիերի փնչոցն ու նրանց վոտեների շտապ գտնիունը : Այզելից վազ տվող մյուս չափառը և յերկումն ել արագ մոտեցան սայլերին .

— Աւ, յես ձեր... ճչացին չափառներն և քնած Սիմոնին ու նրա զամեներին սկսեցին մտրակներով հարվածել :

Ենդը շմած վեր թռավ և հանկարծ սայլից զլիխլայր ընկալ ցած :

— Դե՛նը քչեցիք, դենը, — հայհոյելով և մտրակների շրբուղոցով մի կողմ քչեցին սայլը :

Սայլերն ու սայլապաններն իրար խառնվեցին : Այս հանկարծակի աղմուկից ու ծեծից չչկամ՝ սայլապաններն ուշքի չեյին կարողանում գալ և հո՛, հո՛ բացականչություններով դես ու դեն եյին ընկնում : Կարծում եյին, թե աշխարհի զորքն իրենց զլսին և հավաքվել ու մտաղիր և բալորին կոտորել : Սայլերի մի ժամը ճամբից դուրս յեկավ, մի մասն ել ճամբի կողքերին յեցած իրամատներն ընկան ու մնացին :

Այս իրարանցման ժամանակ սալլերի կողքով դպրոցով անշավ կալկավից (Վլատիկավկաղ) յնկող կառքը և սայլապաններն ել դուրս յեկան ճամբի վրա :

— Կառք և յեղել եղ անտերը, — բացականչնց իլիկոն, յերք դուրս պրաւ մացառներից և նայեց այն կողմ, վոր կողմն արշավում եր կառքը :

— Ո՞ւս, վոնց եյին թակում եղ անաստիածները, — ասաց մեջքը քորելով :

— Են տնաքանդը մեջքիս այնպես պինու շրխկացրեց, վոր աչերս պեծին տվին, — ասաց մյուսը :

— Յես վոր ժամանակին չղարթնեյի ու գլխիս ճարը չտեսնեյի, ինձ ել լավ կըոտկեյին, — ասաց ամենից վերջը իլան :

— Ե՞ս, ախալե՛ր, ամեն բանում ստուանա յես, ամենից յետ դու ելիր, չե՞ :

— Ենափիսի ոձ ես, վոր չեն հավանում քեզ մեր գեղի աղջկերքը, ե՛, — ասաց մյուս սայլապանը :

— Յերանի թե ոձ լինեյի, վոր են մեր գեղի աղջկերանց... բացականչեց ծիծաղելով իլիկոն :

— Ա՛յ, դրոզը տանի քեզ, լավ աղամորդին դու յիս, ամենքը միաբերան ասին իլիկոյին, ծիծաղելով :

Այս խոսակցության միջոցին նրանք իրենց սայլերն ուղղեցին : Այն ե, պատրաստվում եյին ճամբա ընկնելու, յերք նրանցից մեկը ճամբի կողքին խրամատում նկատեց մի բան և կանչեց .

— Ես ո՞ւմ սային ե կանավում :

Ամենքը նայեցին այն կողմը :

— Ո՞վ ե պակաս .

— Տղերք, Սիմոնի սային ե, — կանչեց մին և հարցրեց — իսկ ո՞ւր ե ինքը :

— Սիմոն, — էանչեց դյուղացիներից մեկը. բայց վոչ մի ուեղից պատասխան չեղավ : Իլիկոն քուավ սայլից և շտապով վագ տվեց Սիմոնի գոմեշների կողմը, սակայն հանկարծ կանու առավու գունավեց՝ հաղիս լսելի ճայնով բացականչեց .

— Ես ինչ դժբախտություն ե պատահել, ձեզ մատաղ .

— Ի՞նչ ե, մարդ, — սարսափած հարցրին միաձայն և շտապով վազ տվին իլիկոյի կողմը :

Զեր թշնամին քար դառնա, ինչպես քարացան սայլապանները՝ բներանները բաց . չեյին խմանում ինչ ասեն, յերբ տեսան դամեշների մաս յերեսն ի վայր, քուաքը ջախջախված Սիմոնին :

— Հիմի ո՞վ կդիմանա սրա մոր կոկծին, — բացականչեց նոր քից իլիկոն :

— Են թշվառի համար բախտավոր ուր դժբախտության պիտի փոխի, — ասաց մինը և զլուկը տիսուր քաշ զցեց : Սայլապանները հալաքվեցին Սիմոնի դիակի չուրջը և յերկար ժամանակ դառն վշտով ու հաղար ու մի ու մաքերով տարված՝ լուս ու մունջ նայում եյին նրան :

Լոման ու նիկորան ել, կարծես զգալով իլենց ամբողջ ռըժքախտությունը՝ վզները ծուցին և ջրակալած աչքերը հառեցին Սիմոնի վրա ու դադարեցին ուրիշ կողմ նայել, թողին վարուալը և մերթ-մերթ լսվում եր նրանց մինչոցը, վոր հառաչի յեր նման :

Իսկ լուսինը սառնասիրա, առանց խղճալու նայում եր վերից ու կարծես ստում .

— Ա՛յ, վաղորմելիներ, ի՞նչ եք զլուխներդ կախել ու լալիս, դուք մի արարածի համար այլքան եք արտասվում ու նեղանում, ապա յես ի՞նչ անմա, յերբ իմ աչքի առաջ անիբավ կերպով կոտորված ժողովրդի արյան լճեր են գոյանում... Եհ, դուք, թշվառներ... վողորմելիներ...

Այդ միջոցին լուսինը թագնվեց ամպերի հետեւ ու փակեց աչքերը, կարծես վերջին անդամ զգուշացնելով սայլապաններին՝

— Բավական ե, վորքան կոկծացիք...

— Այս ե մեր կանքը, — յերկար լսությունից հետո բացականչեց մի սայլապան, դառնացած կախ զցեց զլուխը և ջերմարցունքի մի քանի զնդիկներ ընկան Սիմոնի սառած դեմքին...

## Ի՞ՆՉ ԶԶՎԱՆՔՈՎ Ե ՆԱՅՈՒՄ

Եոդ ե, սաստիկ չող, թեև զեռ ժամի տասներկուան ել չկա, բայց արեգն անկարելի յի դուրս դալ փողոց :

Չնայած դրան, Թիֆլիսի փոշոս փողոցներում յերթեվեկությունը չեր դաղարում : Ահա քափ ու քրտնքի մեջ կորած՝ ձիերը դրդուացնելով սլացնում են կառքը, իսկ նրա մեջ նստողը պատըսպարվել է հովանոցի տակ :

Դրողապանը կանդնած ձիու կողքին, վորքան ուժը պատում ե, շրմիացնում ե, բայց ձին տեղից չի շարժվում : Թե ձին և թե տերը լողում են քրտինքի մեջ :

— Պոչից կծիր, պոչից, հանաքով տասց կինտոն և բարձրաձայն սկսեց կանչել՝ «Վարո՛ւնդ, լա՛վ վարունդ, մատղա՛շ վարունդ...»

— Ե՛ աստված վկա, կոխտա եշի բերածն ե, լավ բաղմանչու բաղածն ե, ա՛րա, դե՛սը համեցեք, վարո՛ւնդ, լավ վարունդ...

— Ու, յես քո... չվերջացրեց դրողապանն իր խոսքը, չուռ տվեց մտրակի կոթը և դաղաղած այնպես պինդ զարկեց ձիուն, վոր մտրակի կոթը մեջլցը կես յեղավ :

Զին հանկարծ քաշեց, բայց զրոյդը ճոճուաց միայն ու տեղից չչարժվեց : Զիու ձգված մկանունքները թուլացան, սկսեց դողդողալ և հանկարծ ծնկները ծալիւցին :

— Ծլը՛նդ, ծլը՛նդ... հնչեց տրամվայի զանգը և աղորերի վրա թերքած ձիու կողքով վարոնն անցավ :

— Ա՛յ դու... գոռալով դուրս պրծավ վագոնից մի չաղաղ մարդ և բռնեց դրողապանի ոճիքից : «Գորողովոյ», կանչում եր չաղ մարդը և ցնցում եր դրողապանին :

Նրա աղաղակի վրա յերեվաց քաղաքապահն ու անկվեց նրա առաջ :

— Արձանագրությո՛ւն, արձանագրությո՛ւն, այս ըովելիս

արձանագրություն պիտի կազմել այս զզվելի արարածի վրա, վոր այսպես տանջում և անտառնին ու այնքան բեռ և դնում, դոբ...

— Կազմենք, ձերդ բարեկծնություն, կազմենք, պատասխանում և քաղաքապահնը :

— Իսկ դու դի՞տես ո՞վ եմ յես :

— Գիտեմ, ձերդ բարեկծնություն, դուք կենդանիներին հոգանավորող ընկերության անդամ եք...

— Այս, ապա արձանագրություն...

Դրողապանին ստիպեցին արձակել ձին, բեռը կիսել տվին և ապա իբրավունք տվին ճամբան չարունակելու :

— Ես ինչ բարի մարդ ե յեղել, — սրտի խորքից ասաց Գիգան, վոր կամած պատին՝ սկզբից ևեթու շւշալբությամբ դիտում եր այս տեսաբանը :

Յերեք որ ե, ինչ Գիգան Թիֆլիս և յեկել բանելու, բայց առայժմ յերկնքի տակ և լուսացնում ու մթնեցնում : Մի քանի հաց ուներ հետը բերած, բայց յերել առավոտյան այն ել վերջացալ : Դրանից հետո վոչ մի բան չի դրել բերանը : Վոչ մի ծանոթ չառներ, ուժը վիմեր, չդիտեր : Վորտեղ գործ ուզեց, ամեն ուղղ մերժեցին : Տուն վերապառնար, ի՞նչ սկիալ շններ, չե՞ վոր տնից նրա համար հեռացավ, վոր անգործ եր մնացել, աբուրը փչացել եյին՝ մոտիկ զյուղերումն ել բնրք չեր ստացվուլ . հացի հորը դատարկ եր, իսկ ալյուրի ամբարը հո՛ վաղուց եր գատարկ մնացել . ինչով պիտի կերակրեր ահագին ոչախը : Մտածեց և գերալասեց մի յերկու շահի ճարելու համար բռնել քաղաքի ճամբան : «Ուստի, ես ել քաղաք» — բացականչեց Գրդան, յերբ յերկու որից հետո հասավ Թիֆլիս և հանկարծ մի ինչոր ճանր հոտ կպավ նրա քթին . — «Ես ել քեզ քաղաք» — կրկնում եր նա այս խոսքերը : Արդեն յերեք որ ե անցել, բայց նրա ստամոքսը բան չի մտել, ես անտեր կողքի ծակոցն ել վո՞րտեղից դուրս պրծավ, որինագուր չի կարողանում շունչ քաշել . կողը սաստիկ ծակում ե, կարծես թե տաքությունն ել հետզհետե ավելանում ե, բայց ինչ տաքություն, «Արեն ե առլիս ուղիշ վոշինչ» հուսաղբում եր ինքն իրեն Գրդան : Զուր շատ կա, հենց այստեղ, շատ մտիկ ջրմուղից չուր են լինում դույլերը և նա ամեն մի հինգ բոսեն մի անդամ խմում ե այդ ջրից :

— Ցագդ տանեմ, պարոն... սկիալ բեր վերցնելով՝ ակամա

Դիմեց նա չաղ մարդուն՝ «կենաքանիներին հովանավորող ընկերության» անդամին, յերբ նա իր յնքեսը շուռ տվեց գետի Դիմելան:

Դիմելայի լեզուն կապ ընկալի: Ինչ եր ուղում Դիմելան, ինքն ել չդիմեր: Ահա յերկու որ ե, այսպէս չարշարվում ե, ուղում ե զոնե վողորմություն խնդրել մեկից, բայց ամեն անդամ ձեռքը մեկնելիս՝ կոները թուլանում են, և նույն կապ ե ընկենում և նրա դիմավորությունը մնում ե լոկ դիմավորություն: Զի համար ձակվում: «Ամոթ ե», ասում ե նա և փոխանակ իր ինդիրը մարդկանց ուղղելու, դիմում եր յերկնքին. նրանից չեր ամաչում: Սակայն այժմ նա դիմեց չաղլիկ մարդուն, վորովհետեւ նրա վարչունքը խիստ գուր յեկալ իրեն, բայց պարոնի խիստ հարցմունքը շմեցրեց նրան և լեզուն կապ ընկալի:

— Ինչ ես ուղում... Կրկնեց չաղլիկը նույն ձեմով և վրաից մինչեւ գլուխ չափեց Գիմելային:

— Յես... բանելու համար յեկա, բայց գործ չճարեցի, վուշնչ չունեմ, կողքս ել...

— Հա՛ա, անցիր, — զզվանքով ասաց չաղլիկ մարդը և մըրթմբալով անցավ նրա կողքով:

— Հը՛մ, քմծիծաղ ավեց Գիմելան և գառն ժպիտ յերեվաց նրա շրթունքներին:

Չաղ մարդու խոսքը դնդակի նման դիմակ Դիմելայի սրտին և նրա ծնկները թուլացան, դողդոջուն ծնկներով նստեց նույն տեղում և դառնությամբ սրբեց իր ճակատի քրածինքը:

— Ինչո՞ւ խնդրեցի, ինչո՞ւ... գլուխը չարժելով և գառն ժպիտով հարցնում եր ինքն իրեն. ու պարսավում իր արարքը.

— Վա՛հ, ինչ ես ճամբի մեջ տեղ ցցվել... վոտքով հրելով անցավ մի կինոտ ու կանչեց—կանա՛չի, կանա՛չի...

Դիմելան վերկացավ առանց ճային հանելու: Հույսը կարեց քաքեց. վերադասեց գյուղերը գնալ... «Գուցե այս կողմի գյուղերում գործ ճարեմ»—և որորվելով ճամբար ընկալ վերա կոչ ված թաղի ուղղությամբ:

Իսկ արեւ վերից առասորեն թափում եր իր ճառագայթները, պատում քաղաքի գմբին և իր այրող չողերով խանձում բոլոր չնչալորներին:

2.

— Տեր աստված, կամ սպանիր. կամ մի կաթիլ ջուր առւր, — բերանը ցածաքած բացականչեց նա և բորբոքված աչքերը դնալ յերկինքն ուղղեց:

Գիմելան ուղում եր վերկենալ, բայց ծնկները չեյին հնագանդում. նա դիմեր, վոր մինչև թուռ գետին հանելը հազիվ յերկու վերառ լինի: Այս գիտակցությունը, վոր երենից վոչ շատ հեռվում հոռում և թուռ գետը, ե՛լ ավելի կրկնապատկում եր նրա ծարավը: Անիծում եր իրեն, թե ինչու հեռացավ գետից: Հանկարծ նա իր ձախ կողմում նկատեց մի գյուղ և շտապեց զեպի այն կողմը, մտածելով շուտ հասնել այնտեղ և մի քիչ ազատ շունչ քաշել, բայց հազիվ հաղ հասավ մի ծառի, նա չկարողացավ դիմանալ արևի ճառագայթներին ու պառկեց այդ ծառի ստվերի տակ:

— Կողքի ծակո՞ցը.

Եհ, ծակոցի մասին ո՞վ և մտածում, թեև չնչառությունը խանգարվում եր, «միայն մի կաթիլ ջուր, մի կաթիլ ջուր» այրվելով արտասանում եր նա:

Աստված, — բացականչեց նա ջերմեռանլությամբ, ցանկանում եր իր խնդիրը կրկնել, բայց հիշեց, վոր մի քանի անդամ գիմել ե նրան, բայց խնդրածն անկատար ե մնացել: Նրա բարությամբ լի աչքերը հանկարծ պարզվեցին ու լցվեցին հուսահատությամբ: Գիմելան նայեց իր շուրջը և ո՞վ զարմանք, չքացել ելին արևի ճառագայթները: Նայեց յերկնքին: Մի՞թե նրա իւնդիրը լսելի յեղալ: Յերկինքը մոխրագույն ե դարձել: Նրա ուրախությունը սահման չունի: «Աստված, աստված»—բացականչում եր Գիմելան ուրախացած ու ներողություն խնդրում նրանից իր հուսալքության համար:

Յերկինքը քանի գնում, մռայլում ու թխալում եր: Մինեց. չնչառությունը դժվարացավ: Զայրացած յերկինքը կարծես պատրաստվում եր կովի և ցանկանում եր մի այնպիսի գործ սկսել, վոր ամբողջ աշխարհը սասանեցնի: Գիմելան թեև կժշտարանում եր վեր կենալ, բայց մի կերպ շարժվեց ու հենվեց ծառի բնին: Նա ներշնչվեց ջերմեռանդ հավատով և վորպես մարմնացած հավատ, պատրաստվեց գոհաբանական «հիմն» մատուցանել... Յերկնքում հանկարծ ամբողջ տարածությամբ անցավ մի գիգանտ

գիծ և այդ յերեվաւյթը գրավեց նրա ուշադրությունը. նա չկարողացավ վոչ մի բառ արտասանել: Փայլատակումին անմիջապես հաջորդեց ամպերի ահուելի վորոտմունքը, սոսկացին ամենքը, վորոնք առհասարակ ընդունակ են սոսկալու. ինքը յերկիրն եւ ալեկոծվեց:

3.

— Լեզվս ճաքեց, — ասաց ինքն իրեն դեպի Թիֆլիս ուղեվորվագ Բաղալը և չուփի փեշերը հավաքելով՝ դցեց ձախ ուսին. —

— Յես կաքծում եյի, — շարունակեց նա, — ջրհեղեղ և լինելու, բայց . . . յերկինքն ել կատակներ ե խմացել, «պուստոյ տրեվոդա» (դատարկ տագնապ) նույնիսկ գետինը թաց չարավ, մի քիչ մաղմըշեց. ապա նայիր յերկնքին, տես վոնց հանկարծ ողարզվեց, հըմ, — ըմծիծաղ տվից Բաղալը: Այդ միջոցին նա կանգնեց ու նայեց իր շուրջը:

— Վա՛հ, փառք քեզ, աստված, — խաչակնքեց նա զարմանքով և շարունակեց գողալով. — լավ ե վոր ինձ չդիպավ, ես ահագին ծառը ճեղքել ե միջից, ի՞նչ կլիներ իմ հալը. կարծեմ . . . հա՛, ճիշտ, ասում են՝ կայծակի կտորը լավ ե, արի վնտքեմ, գուցե կարողանամ դտնել, — ասաց Բաղալն ու մոտեցավ ծառին.

— Ա՛յ դու քննձրու, դու արդեն գտնել ես հա՞յ կայծակի կտորը, — բացականչեց նա՝ տեսնելով ծառի տակ նստած գյուղացուն:

— Ա՛յսկեր, — կանչեց նա, առաջ դնալով, բայց հանկարծ գունատվեց. ծառի տակ նստած գյուղացին քարացել մնացել եր արձանի նման:

Բաղալը դարձյալ նայեց ու սոսկաց. նա չկարողացավ դիմանալ գյուղացու դեմքի արտահայտությանը:

Միայն զդվանք կարելի յեր կարուալ գյուղացու կիսաբաց աշքերի և ժպտացող շրթունքների վրա. . .

— Վա՛հ, ի՞նչ զդվանքով ե նայում, զողդողալով բացականչեց Բաղալը և, վորքան ուժը պատում եր, վաղեց Թիֆլիս տանող ճանապարհի ուղղությամբ:



ՀԱՅՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ



414

ԳԻՒԾ 25 ԿԱՊ. (Յ Ա.)



ՇԻՕ ԱՐԱԳՎԻՍՊԻՐԵԼԻ

ՐԱԾՈՒՅՆ

Գումարատ ՀՀ Արմենիա  
Էրևան—1981

74.459

